ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-11-2-Ա

ք. Երևան 23.10.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի հոկտեմբերի 23-ի նիստում քննարկեց 2024 թվականի սեպտեմբերի 26-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված Public joint-stock company "Rostelecom" ընկերության (Sinopskaya naberezhnaya, d.14, litera A, munitsipalny okrug Smolninskoye, vn.ter.g. RU-191167 Saint-Petersburg, RU) «Wink» (IR1703595) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «winky» (CELLULAR ITALIA S.P.A. Via Grigoris Lambrakis, 1/A I-42122 REGGIO EMILIA (Reggio Emilia) (IT), IR 1213026) շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 130-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում նման տարր է հանդիսանում համեմատվող ապրանքային նշաններում ներառված «wink» բառային տարրը: Հետևաբար տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ կարող է պատկերացում առաջանալ մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որի հետ ինքն արդեն առնչվել է: Ապրանքային նշանների նմանության առավել ընդհանուր չափանիշը տնտեսական շրջանառության ընթացքում սպառողի կողմից դրանք շփոթելու

հնարավորությունն է: Նշանի նմանությունը որոշելիս հաշվի է առնվում, որ սպառողը, որպես կանոն, հնարավորություն չունի համեմատելու երկու նշանները, այլ առաջնորդվում է նախկինում տեսած նշանի մասին ունեցած ընդհանուր տպավորությամբ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին, քանի որ կրկնական փորձաքննության որոշման մեջ նշված հակադրված գրանցված ապրանքային նշանի գործողությունը դադարեցվել էր ժամկետը չերկարաձգելու պատճառով:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված Public joint-stock company "Rostelecom" ընկերության «Wink» (IR1703595) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ